



ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ սրացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տատանում ունեցող բաղադրիչներ

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19

Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Դ. Տերյան

(010) 591 525, (010) 591 526

ՀՀ կենտրոնական բանկի տոկոսադրույքներ

Վերաֆինանսավորման

5.75


Դրամական միջ. ներգրավման

4.25


Լոմբարդային ռեպո

7.25


Ավանդներ, վարկեր 2018թ. (մլրդ. դրամ)




Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ մինչև 1 տ.




Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ 1 տ. ավելի




Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներ մինչև 1 տ.




Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներ 1 տ. ավելի




ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով դրամական միջոցների զուտ ներհոսք (հազ. դոլար)



ՀՀ միջազգային պահուստների կառուցվածքը (մլն դոլար)




Սպառողական գների ինդեքսը



Տնտեսական ակտիվության ցուցանիշը (%)

(նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ)



ՀՆԱ

	մլն. ՀՀ դրամ	նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)	նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ (%)
I եռամսյակ	1,113,049.4	109.7	61.1
II եռամսյակ	1,362,036.7	107.5	121.9
III եռամսյակ	1,676,535.3	102.7	129.5

Իրական հատված

ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը 2018թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ կազմել է 6.4%, 2018թ. դեկտեմբերը նոյեմբերի նկատմամբ 24.3%: 2018թ. հունվար-դեկտեմբերի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2017թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 5.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2018թ. դեկտեմբերին կազմել է մոտ 174.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 5.5%-ով, իսկ ընթացիկ տարվա նախորդ ամսվա նկատմամբ՝ 12.5%-ով: Տարվա կտրվածքով աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության և ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման ու վերամշակման ոլորտներում գրանցված համապատասխանաբար 13.1% և 7.4% աճով: Միևնույն ժամանակ անկում են ապրել հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման (-11.5%), ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման (-4.5%) ոլորտները:

2018թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում արդյունաբերական արտադրանքը կազմել է մոտ 1.7 տրլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 4.3%-ով: Նշված ժամանակահատվածում աճ են գրանցել մշակող արդյունաբերությունը՝ 10%, և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 5.7%, իսկ անկում են ապրել հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը՝ -14%, ինչպես նաև ջրամատակարարումը, կոյուղին, թափոնների կառավարումը և վերամշակումը՝ -2%:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը 2018թ. դեկտեմբերին կազմել է մոտ 94.4 մլրդ դրամ, որի 97.9%-ը բաժին է ընկնում անասնաբուծությանը, իսկ 2.1%-ը բուսաբուծությանը: Ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ կրճատվել է 2%-ով, իսկ ընթացիկ տարվա նոյեմբերի համեմատ աճել է 22.1%-ով: Տարեկան կտրվածքով ծավալի կրճատումը պայմանավորված է եղել անասնաբուծության 2.1% նվազմամբ:

2018թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կրճատվել է 7.6%-ով՝ կազմելով 889.7 մլրդ դրամ: Անկումը պայմանավորել է ինչպես բուսաբուծության -12.1%, այնպես էլ անասնաբուծության -2.7% կրճատումը:

Սպառողական գների ինդեքս

2019թ. հունվար ամսին 12-ամսյա գնաճը կազմել է 0.6% այդ թվում, սննդամթերքինը (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ)՝ 0.5%, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.9%, ծառայությունների սակագներինը՝ 0.6%:

2019թ. հունվարին 2018թ. դեկտեմբերի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 1.7% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 4.2% գնաճով:

Սննդամթերքի (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) գները ամսվա ընթացքում աճել են 3.8%-ով, ծառայությունների սակագները՝ 0.2%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.6% գնանկում:

ԿԲ դրամավարկային քաղաքականություն

2019թ. հունվարի 29-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 5.75%:

2018 թ. դեկտեմբերին գրանցվել է 1.5% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 1.8%: Առաջիկա ամիսներին ցածր գնաճային միջավայրը կպահպանվի և 12-ամսյա գնաճը կձևավորվի տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից ցածր մակարդակում:

ԿԲ խորհուրդն արձանագրում է, որ 2018թ. վերջին տնտեսական ակտիվությունը շարունակում է դեռևս թույլ մնալ, իսկ տարվա տնտեսական աճը սպասվում է 5.0%-ի շրջակայքում: ԿԲ խորհուրդը նպատակահարմար է գտնում ավելացնել դրամավարկային խթանման չափը՝ նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով և կիրառել երկարաժամկետ իրացվելիության ներարկման գործիքակազմը:

Միջազգային ֆինանսական շուկա

Արժույթ, ապրանք www.investing.com	Փոփոխություն հունվար 2019թ.	Փոփոխություն 2018թ.
EUR/USD	-0.21%	-7.65%
GBP/USD	2.69%	-10.09%
USD/RUB	-6.33%	+24.23%
USD Index	-0.45%	+7.62
Նավթ (Brent)	15.04%	-22.08%
Ոսկի	2.91%	-4.3%

Հիմնական Մակրոտնտեսական Ցուցանիշներ	ԱՄՆ			ԵՄ			Մեծ Բրիտանիա			ՌԴ		
	Վերջին		Նախորդ	Վերջին		Նախ.	Վերջին		Նախ.	Վերջին		Նախ.
Իրական հատված												
ՀՆԱ աճ (եռամսյակային՝ ՉՕՉ)	3են	3.4%	4.2%	3են	0.2%	0.2%*	3են	0.6%	0.6%			
ՀՆԱ աճ (տարեկան՝ YoY)	3են	3%	2.9%	3են	1.6%	1.7%*	3են	1.5%	1.5%	3են	1.5%	1.3%
Աշխատանքի շուկա												
Գործազրկության մակարդակ	Դկ	3.9%	3.7%	Նյ	7.9%	8.0%*	Նյ	4.0%	4.1%	Նյ	4.8%	4.7%
Գնաճ												
ՍԳԻ (ամսական՝ MoM)	Դկ	-0.1%	0.0%	Դկ	0.0%	-0.2%	Դկ	0.2%	0.2%	Դկ	0.8%	0.5%
ՍԳԻ (տարեկան՝ YoY)	Դկ	1.9%	2.2%	Դկ	1.6%	1.9%	Դկ	2.1%	2.3%	Դկ	4.3%	3.8%
Core ՍԳԻ (ամսական՝ MoM)	Դկ	0.2%	0.2%	Դկ	0.5%	0.5%						
Core ՍԳԻ (տարեկան՝ YoY)	Դկ	2.2%	2.2%	Դկ	1%	1%	Դկ	1.9%	1.8%			
Առևտուր/սպառում												
Մանրածախ առևտուր (ամսական՝ MoM)	Նյ	0.2%	1.1%*	Նյ	0.6%	0.6%*	Դկ	-0.9%	1.3%*			
Մանրածախ առևտուր (տարեկան՝ YoY)				Նյ	1.1%	2.3%*	Դկ	3.0%	3.4%*	Դկ	3.0%	2.0%*
Արտաքին հատված												
Առևտրային հաշվեկշիռ (մլրդ ԱՄՆ դոլար/եվրո/ֆունտ/ ռուբլի)	Հկ	-55.5	-54.6*	Նյ	19	14	Նյ	-12.02	-11.95*	Նյ	18.98	19.7
Տոկոսադրույքներ												
Վերաֆինանսավորման %	Դկ	2.25%- 2.5%	2%-2.25%	Հկ	0.0%	0.0%	Դկ	0.75%	0.75%	Դկ	7.75%	7.5%
Ավանդադրման %				Հկ	-0.4%	-0.4%						

*- Ցուցանիշի վերանայում բացասական ուղղությամբ,

*- ցուցանիշի վերանայում դրական ուղղությամբ,

*- նախնական տվյալ:

Ֆոնդային ինդեքսներ Investing.com	Փոփոխություն, հունվար 2019	Փոփոխություն, 2018թ.
S&P 500 (ԱՄՆ)	7.87%	-11.34%
DOW 30 (ԱՄՆ)	7.17%	-10.79%
NASDAQ 100 (ԱՄՆ)	9.11%	-9.79%
STOXX 600	6.23%	-14.6%
FTSE 100 (Մեծ Բրիտ)	3.58%	-10.69%
CAC 40 (Ֆրանսիա)	5.54%	-13.7%
DAX (Գերմանիա)	5.82%	-19.94%

ԱՄՆ դոլար

- Հունվարին 21-22 դոլարը հասավ գրեթե 3 շաբաթվա ամենաբարձր ցուցանիշին՝ պայմանավորված Չինաստանի ՀՆԱ-ի 4-րդ եռամսյակի աճի ցածր ցուցանիշներով: Միաժամանակ ԱՄՀ-ն նվազեցրել էր իր կանխատեսումները կապված 2019թ. և 2020թ. համաշխարհային տնտեսության աճի հետ՝ դա պայմանավորելով Եվրոպայի և մի շարք զարգացող երկրների տնտեսությունների թուլացմամբ, ինչպես նաև առկա առևտրային լարվածություններով, որոնք ապակայունացնում են համաշխարհային տնտեսությունը:
- Դոլարը հասավ առավելագույնին 24.01.2019թ.,՝ ԵԿԲ-ի և Ճապոնիայի կենտրոնական բանկի հայտարարություններից հետո:
- Շաբաթվա վերջի անկումը պայմանավորված էր դրամավարկային քաղաքականության, Կառավարության աշխատանքների և մի շարք այլ անորոշություններով:
- Արդյունքում ներդրողների ուշադրությունը գերազանցապես ուղղված էր ՖՊՀ-ի 2019թ. առաջին նիստին: Այն կայացավ հունվարի 30-ին, և, ինչպես սպասվում էր, տոկոսադրույքները, դեկտեմբերին 4-րդ անգամ 2018թ. ընթացքում բարձրացվելուց հետո, պահպանվեցին անփոփոխ՝ 2.25%-2.5%:
- Նախապես հայտարարվել էր, որ 2019թ. ընթացքում նախատեսվում է ՖՊՀ տոկոսադրույքը բարձրացնել 2 անգամ, սակայն մի շարք պաշտոնյաներ իրենց վերջին հայտարարություններում արտահայտում են ավելի մեղմ կարծիքներ:
- ԱՄՆ կողմից չինական ապրանքների նկատմամբ ավելի բարձր՝ 10%-ի փոխարեն 25%, մաքսատուրքերը ուժի մեջ կմտնեն մարտի 1-ից: Թրամփը հայտարարել է, որ մինչ այդ չի պատրաստվում հանդիպել Չինաստանի նախագահի հետ: Սակայն նախատեսված են երկուստեք հանդիպումներ ԱՄՆ և Չինաստանի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների

միջև՝ փորձելու գտնել լուծում առևտրային պատերազմին վերջ տալու համար:


Ներդրողները թերահավատորեն են մոտենում հաջող բանակցություններ տեղի ունենալու հարցին:

- ԱՄՆ աշխատանքի շուկայում շարունակվում են դրական տեղաշարժերը՝ արդեն փետրվար ամսվա առաջին շաբաթվա տվյալներով գործազրկության նպաստի դիմումները կազմել են ընդամենը 234 հազար նախորդ 253 հազարի փոխարեն:

- Համաշխարհային տնտեսական ցուցանիշները շարունակում են ցածր մնալ և ըստ կանխատեսումների՝ դրանք ավելի են նվազելու:

- Նման պայմաններում նկատվում է փախուստ դեպի ավելի ցածր ռիսկային ակտիվ՝ ԱՄՆ դոլար:

USD Index / Հունվար, 2019թ.




Եվրո

- 24.01.2019թ. ԵԿԲ նիստում տոկոսադրույքը, ինչպես կանխատեսվում էր, մնաց անփոփոխ՝ 0%:

- Բազմաթիվ բացասական տնտեսական և գեոքաղաքական գործոնների առկայության պայմաններում նվազեցվել է ԵՄ տնտեսական աճի կանխատեսումը: Կանխատեսվում է, որ 2019-2020թթ ԵՄ տնտեսությունը կաճի համապատասխանաբար 1.3%-ով և 1.6%-ով, այն դեպքում, երբ նոյեմբերին կանխատեսվում էին 1.9% և 1.7% աճի ցուցանիշներ:

Առավելագույն վատթարացումը գրանցվել է Գերմանիայի, Նիդերլանդների և Իտալիայի տնտեսական աճի ցուցանիշներում:

EUR/USD / Հունվար, 2019թ.



Բրիտանական ֆունտ

- Բրիտանական ֆունտի անկմանը նպաստել է դոլարի դիրքերի ամրապնդումը:
- Առաջիկայում սպասվում է մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների հրապարակում, որոնք՝ ըստ կանխատեսումների, կլինեն սպասվածից ավելի ցածր:
- Մոտ 2 ամիս է մնացել մինչև մարտի 29-ին Մեծ Բրիտանիան դուրս կգա ԵՄ կազմից, սակայն դեռևս չկա որևէ համաձայնություն կապված Brexit –ի հետ:
- Մինչև փետրվարի 13-ի վարչապետ Թերեզա Մեյը պետք է պառլամենտ ներկայացնի Brexit-ի շուրջ բանակցությունների արդյունքները, այլապես պառլամենտը իր ավելի մեծ վերահսկողության տակ կպահի Brexit-ի գործընթացը:
- Հիշեցնենք, որ Անգլիայի Բանկն 2018թ. ընթացքում իրականացրեց դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի միայն մեկանգամյա բարձրացում, իսկ ներկայումս ստեղծված գեոքաղաքական ռիսկերի պայմաններում դեռևս քաղաքականության խստացումներ չեն իրականացվում, ինչը բացասաբար է անդրադառնում բրիտանական արժույթի վրա:



Ռուբլի


- Փետրվարի 8-ին ՌԴ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողեց անփոփոխ՝ 7.75%:
- ՌԴ-ու ինֆլացիայի տեմպերը շարունակում են արագանալ՝ ավելացնելով ԴՎՔ խստացումներ իրականացնելու հավանականությունը:
- Ռուբլին ամրապնդեց դիրքերն այն բանից հետո, երբ ՌԴ ԿԲ-ն հայտարարեց, որ առկա են ինֆլացիայի բարձրացման ռիսկեր:



Ոսկի

- Ոսկու նկատմամբ համաշխարհային պահանջարկը 2018թ. աճել է 4%-ով՝ կազմելով 4,345.1տ:
- Կենտրոնական բանկերի կողմից ոսկու գնումների ծավալներն 2018թ. հասել են վերջին 50 տարիների մաքսիմումին:
- Համաշխարհային տնտեսության աճի տեմպերի դանդաղման, մի շարք երկրներում ստեղծված գեոքաղաքական ռիսկերի, ինչպես նաև ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացման ֆոնին 2019թ. հունվար ամսվա վերջում ոսկու գները, կտրուկ աճ գրանցելով, դեպի վեր հատեցին մեկ ունցիայի դիմաց 1325 ԱՄՆ դոլար արժեքը:

Ոսկու գին / Հունվար, 2019թ.



Նավթ

- Նավթի գները, հունվարի առաջին կեսին զգալիորեն վերականգնվելուց հետո արդեն ամսվա վերջում տատանվում էին մեկ բարելի դիմաց 60-63 ԱՄՆ դոլար միջակայքում: Վերջինս պայամանավորված է մի շարք հակասական գործոնների պահպանմամբ, այն է՝ ԱՄՆ կողմից նավթի արդյունահանման ծավալների շարունակական աճը և ՕՊԵԿ-ի անդամ և այլ խոշոր նավթ արդյունահանող երկրների կողմից արդյունահանման ծավալների կրճատումները:

Նավթի գին / Հունվար, 2019թ.

